ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 փետրվարի շաբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

18
(3049)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄ ԿԼԻՆԻ ՆԱԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՀԵՏ



Նիկոլ Փաշինյանը բազմիցս է հայտարարել, որ Կիրանցով եւ Բաղանիսով սահմանազատումը չի ավարտվելու, նոր սահմանային սյուներ են դրվելու հարեւան մյուս երկրների հետ եւս:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկություններ ուներ, որ հայտնի սահմանազատումը սկսվելու է Գեղարքունիքի մարզից՝ Ճամբարակ եւ Սոթք համայնքներից:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցմամբ դիմել է պաշտպանության նախարարությանը՝ տեղեկանալու համար, թե կոնկրետ, որ կետերից է սկսվելու սահմանագծումն ու սահմանազատումը: Նախարարությունից լրացուցիչ ժամանակ են խնդրել հարցմանը պատասխանելու համար, սակայն արտաքին գործերի նախարարությունից հարցմանը պատասխանել էին հետեւյալ կերպ. «Ըստ 2025 թվականի հունվարի 16-ին Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության սահմանին տեղի ունեցած Հայաստանի եւ Ադրբեջանի Հանրապետությունների միջեւ պետական սահմանին սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի եւ Հայաստանի եւ Ադրբեջանի Հանրապետությունների միջեւ պետական սահմանին սահմանազատման պետական հանձնաժողովի 11-րդ հանդիպման արդյունքների՝ Կողմերը շարունակել են մտքերի փոխանակությունը սահմանազատման աշխատանքների հետագա իրականացման համար հատվածների/հատվածամասերի հերթականության հարցի շուրջ եւ համաձայնության են եկել սկսել պետական սահմանի սահմանազատման համալիր աշխատանքները հյուսիսային հատվածից՝ Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի սահմանների հատման կետից եւ այնուհետեւ հարավային ուղղությամբ՝ հյուսիսից հարավ մինչեւ Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի հանրապետության սահմանը Իրանի Իսլամական Հանրապետության հետ»,- ասված է հարցմանն ի պատասխան:

Այսինքն, սահմանազատում տեղի է ունենալու նաեւ Իրանի եւ Վրաստանի հետ:

Հարկ է նշել, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը մշտապես ընդգծել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանների անխախտելիության եւ տարածաշրջանում սահմանների փոփոխության անընդունելիության իր դիրքորոշումը:

Օրինակ՝ 2025 թվականի փետրվարի 4-ին Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւի հետ հանդիպման ժամանակ վերահաստատել է, որ «տարածաշրջանում սահմանների ցանկացած փոփոխություն ամենեւին ընդունելի չէ»:

Իշխանությունները փորձում են Հայաստանն ավելի մասնատել, նոր պատեր կառուցել սահմանին եւ նոր անվտանգային ծառեր տնկել՝ ադրբեջանցիներին չտեսնելու համար: Ահա այսպիսին է «Ապագա կա՛» արտահայտության գործնական տարբերակը:

Նիկոլ Փաշինյանն իր թիմակիցներին վստահեցրել է՝ Գյումրիում մարտին կայանալիք ընտրություններին ՔՊ-ն հաղթելու է: ArmLur.am-ը հայտնել էր, որ հինգշաբթի օրը ՔՊ-ականները Նիկոլ Փաշինյանի՝ Մյունխեն մեկնելուց ժամեր առաջ հավաքվել եւ քննարկել են Գյումրիում կայանալիք ընտրությունները: ՔՊ նիստի «գլխավոր դերակատարներից» մեկը համայնքապետի ժ/պ Սարիկ Մինասյանն է եղել, որը վստահեցրել է՝ իրենից հասանելիք ամեն ինչ անում է, հանդիպում է քաղաքացիների հետ, շահում նրանց վստահությունը, որ ընտրվի: Շիրակի մարզպետ Դավիթ Առուշանյանը, Գյումրու ավագանու ՔՊ-ական անդամները, անգամ Շիրակի նախկին մարզպետ Մուշեղ Մուրադյանն է եկել Երեւան՝ ՔՊ նիստին մասնակցելու համար: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ականների մի մասը անհանգստություն է հայտնել, որ իսկապես թեժ մրցակցություն է սպասվում, քանի որ մյուս թեկնածուները՝ Ռուբեն Մխիթարյան, Վարդան Ղուկասյան, Կարեն Սիմոնյան, Մարտուն Գրիգորյան նույնպես մեծ հեղինակություն ունեն Գյումրիում: Չնայած այս անհանգստություններին՝ Նիկոլ Փաշինյանը հանգստացրել է թիմակիցներին, թե խոչընդոտներ կլինեն, բայց ամեն ինչ լավ կլինի: Ուղղակի հրահանգել է մինչեւ ընտրություններ լծվել ՔՊ-ի օգտին ձայներ բերելու գործին:

ԱԺ պատգամավոր Հովիկ Աղազարյանը նպատակ ունի առաջիկայում Նիկոլ Փաշինյանի հրաժարականի գործընթաց սկսել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Աղազարյանը այս օրերին տարբեր հանդիպում-քննարկումներ է ունենում իր նորաստեղծ կուսակցության ներկայացուցիչների հետ, որ անվստահության գործընթաց սկսի: Հիշեցնենք, որ փետրվարի 8-ին տեղի էր ունեցել Հովիկ Աղազարյանի եւ ՔՊ-ից հեռացված մյուս պատգամավոր Հակոբ Ասլանյանի նորաստեղծ «Միացյալ ազգային սոցիալիստական կուսակցության» հիմնադիր համագումարը, որի ժամանակ Աղազարյանը հայտարարել էր. «Պայքարելու ենք, որ Նիկոլ Փաշինյանը չվերընտրվի եւ նորից վարչապետ չդառնա»: Հիշեցնենք՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցի ժամանակ տեղեկացրել էր, որ ՔՊ պատգամավորներ Նարեկ Զեյնալյանին եւ Հովիկ Աղազարյանին խնդրել է պատգամավորական մանդատները վայր դնել՝ հույս հայտնելով, որ Հովիկ Աղազարյանը կկատարի իր խնդրանքը: Նոյեմբերի 22-ին Նարեկ Զեյնալյանը ԱԺ էր ներկայացրել մանդատը վայր դնելու դիմումը: Հովիկ Աղազարյանը, փաստորեն, մերժել էր Փաշինյանի խնդրանքը: Մենք դիմեցինք Աղազարյանին՝ պարզելու, թե երբ է պրոցես սկսելու Նիկոլ փաշինյանի հայտարարության պահանջով. վերջինս հայտարարեց, թե «Իմ առաջիկա պլանների մասին նպատակահարմար չեմ համարում խոսել»:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Երեւանի քաղաքապետարանը, Տիգրան Ավինյանի գլխավորությամբ, մտահոգված է հանրային տրանսպորտի ուղեւորների կողմից իրականացվող բոյկոտով: Թեժ քննարկվում է այն հարցը, որ բոյկոտի մասշտաբը կարող է օրեցօր մեծանալ: Հիշեցնենք, որ փետրվարի 1-ից ուժի մեջ մտած միասնական տոմսային համակարգի ներդրման արդյունքում մեկ ուղեւորության արժեքը բարձրացել է 100 դրամից մինչեւ 150 դրամ: Այս փոփոխությունը առաջացրել է քաղաքացիների դժգոհությունը, ինչի հետեւանքով որոշ ուղեւորներ հրաժարվում են վճարել նոր սակագինը: Քաղաքապետարանը արձագանքել է այս իրավիճակին՝ հայտարարելով, որ հսկիչներ են տեղակայվել ավտոբուսներում՝ վերահսկելու ուղեւորների վճարումները: Նրանք հորդորում են ուղեւորներին վճարել տոմսերի արժեքը՝ նշելով, որ առանց վճարման տրանսպորտը չի կարող շարունակել իր աշխատանքը: Ընդդիմադիր խմբակցությունները, այդ թվում՝ «Մայր Հայաստան» շարժումը, շարունակել են բոյկոտի ակցիաները՝ պահանջելով վերանայել սակագնի բարձրացումը: Նրանք պնդում են, որ 100 դրամով հնարավոր է պահպանել տրանսպորտը եւ կոչ են անում քաղաքապետարանին լսել քաղաքացիների կարծիքը: Այս իրավիճակը ցույց է տալիս, որ քաղաքապետարանը պետք է ուշադրություն դարձնի քաղաքացիների կարծիքին եւ հնարավորինս արագ լուծումներ գտնի տրանսպորտի սակագների բարձրացման խնդիրների վերաբերյալ: Ընդդիմադիրները խոստանում են ամենօրյա ռեժիմով ակցիաներ իրականացնել տարբեր վայրերում:

ՊԵՏՔ Է ԱԶՆԻՎ ԼԻՆԵԼ

ՄԵՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ԿԱ՞Ի ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԱՐԵՆԱՅՈՒՄ

«Ժողովուրդ»-ը զրուցել է Արդար Հայաստան կուսակցության նախագահ Նորիկ Նորիկյանի հետ:

-Պարոն Նորիկյան, վերջերս ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը այնպիսի հայտարարություն արեց, որ մինչ օրս բուռն քննարկումների թեմա է դարձել հանրության շրջանում: Ըստ նրա՝ արցախցիներն իրենց բնակավայրերը լքելու փոխարեն պետք է մնային ու կռվեին: Ավելի ուշ Նիկոլ Փաշինյանը, կարծեք, ամենեւին էլ դեմ չէր Ալեն Սիմոնյանի տեսակետին: Դուք ինչպե՞ս եք կմեկնաբանեք: Ինչու՞ նման հայտարարություն արվեց:

-Այդ հայտարարությունը տեղավորվում է սեփական ձախողումները ծածկադմփոց անելու, սեփական անհաջողությունների եւ սեփական քաղաքական թիմի գործունեությունը տապալված վիճակից այլ կեպ ներկայացնելու իրողության մասին: Այդ հայտարարությունը այլ դիտանկյունից պետք է նայել. ես ապշած եմ Հայաստանի բարձրագույն իշխանության տարբեր ներկայացուցիչների վրա, նրանք այնպիսի հայտարարություններ են անում՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար, չեն հաշվարկում դրա իրավաքաղաքական հետեւանքները, այն մասով որ Ադրբեջանը կարող է դրանք օգտագործել Հայաստնի Հանրապետության դեմ:

-Ըստ Ձեզ՝ նրանք առանց գիտակցելո՞ւ են այս ամենն անում: Նիկոլ Փաշինյանն էլ բազմիցս այնպիսի հայտարարություններ է արել, որոնք հետագայում հենց Ադրբեջանի կողմից օգտագործվել են Հայաստանի դեմ:

-Պետք է ժողովուրդը հետեւություններ անի: Ես չեմ կարող, որ իրենք չեն պատկերացնում, բայց միեւնույն ժամանակ ուզում եմ հասկանալ դրա նպատակը, պատճառը, շարժառիթը որն է: Իրենք իրենց անհավասարակշիռ, չհաշվարկված հայտարարություններով էլ ավելի են գրգռում եւ երկարացնում Ադրբեջանի եւ նրա ղեկավարի լեզուն: Կոնկրետ տվյալ դեպքում, ակնհայտ է, միջազգային իրավունքի բոլոր սկզբունքների ու նորմերի համաձայն Ադրբեջանի կոմղից Արցախում իրականացվել է էթնիկ զտման գործընթաց, արցախահայությունը տեղահանվել է: Այդ ամենը բոլոր կոնվենցիաներով դիտվում է մարդու իրավունքների դեմ ուղղված հանցագործություն, եթե ոչ ցեղասպանություն: Այսինքն՝ բոլոր բնորոշիչներն առկա են որպեսզի արցախահայության նկատմամբ իրագործված բռնի տեղահանումը դիտարկեն, որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Փոխանակ այսպիսի փաստեր առաջ բերվի, փորձ է արվում հանրության մեջ արմատավորել այն գաղափարը, որ որոշ արցախցիներ չեն կռվել, դրա համար մենք պարտություն ենք կրել:

-Նախորդ շաբաթ խորհրդարանում ընդունվեց Հայաստանում ԵՄ անդամակցության գործընթացի մեկնարկի մասին նախաձեռնությունը: Սրա՞ն ինչպես եք Դուք վերաբերվում: Իշխանությունները շատ բուռն են ներկայացնում այս գործընթացը՝ որպես հույսի փրկության օղակ, բայց մյուս կողմից որեւէ արձագանք չկա:

-Ես չէի ցանկանա մի փոքր այլ ենթատեքստից ներկայացնել այդ իրավիճակը: Մենք պետք է հաշվարկենք ինչպես մեր ցանկությունները, այդպես էլ մեր հնարավորությունները: Ով ոչ միայն ցանկություններն ու հնարավորությունները, այլ Եվրամիության քաղաքական կամքի արտահայտությունը, արդյոք իրենք իրենց հեռանկարում դիտարկում են մեր տարածաշրջանը Եվրամիության անդամության արենայում: Իմ կարծիքով՝ ժողովրդի հետ պարտավոր են ազնիվ լինել բոլոր քաղաքական ուժերը: Այն օրինագիծը, որը դրվել է շրջանառության մեջ, որը շատ հնարավոր է՝ դառնա օրենք, որեւէ կերպ չի կարող դառնալ Եվրամիությանն անդամակցության անկյունաքարերից մեկը:

ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ՀԻՓՈԹԵՔՈՎ ԲՆԱԿԱՐԱՆ. ՆԱԽԱՐԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏԸ

Կառավարության տարբեր մակարդակների աշխատակիցներ, Կառավարությունում աշխատելուն համընթաց, շարունակում են բարելավել իրենց ֆինանսական դրությունը:

ArmLur.am-ը շարունակում է ուսումնասիրել տարբեր պաշտոնյաների լրացրած հայտարարագրերը եւ այն ներկայացնում իր ընթերցողներին: Անցյալ տարվա «Վոթսափային հրաժարականներից» հետո ՏԿԵ նախարար նշանակված Դավիթ Խուդաթյանը երեւանյան իր բնակարանը գնել է դեռ 2019 թ, չնայած այդ ժամանակ դեռ Արմավիրի քաղաքապետն էր: Նա Նիկոլ Փաշինյանի հրամանագրով նշանակվել է Արմավիրի քաղաքապետի պաշտոնակատար 2018թ հունիսին, իսկ հոկտեմբերի 21-ի ՏԻՄ ընտրություններում ընտրվել է քաղաքապետ: Նախքան «Թավշյա հեղափոխությունը» աշխատել է վարկային կազմակերպությունում որպես մասնաճյուղի մասնագետ:

2023 թ. վերաբերյալ իր լրացրած հայտարարագրում կարող ենք տեսնել, որ Խուդաթյանը տարվա սկզբում իր բանկային հաշվում ունեցել է մոտ 500 հազար դրամ, որն ավելացել է տարվա վերջ՝դառնալով մոտ 950 հազար դրամ: Իսկ 2021թ լրացրած հայտարարագրում կարող ենք տեսնել, որ նա տարվա սկզբում առհասարակ չուներ գումար բանկային հաշվում, իսկ արդեն տարվա վերջ նա 337 հազար դրամ հայտարարագրել էր:

Պաշտոնյան հայտարարագրել էր կանխիկ 3 միլիոն 500 հահզար դրամ տարվա սկզբի համար, եւ 4 միլիոն 100 հազար դրամ տարվա վերջում:

Չնայած կառավարության վարած քաղաքականությանը եւ կոչերին, որ քաղաքացիները ավելի շատ վստահեն բանկերին, այնուամենայնիվ պաշտոնյանները կարծես թե շարունակում են չվստահել բանկային համակարգին՝ նախընտրելով պահել գումարը կանխիկ եղանակով: Բացառություն չէ նաեւ ՏԿԵ նախարարը, ով 2023թ սկզբի համար որպես Արմավիրի մարզպետ հայտարարագրել է կանխիկ 3 միլիոն 800 հազար դրամ, իսկ տարվա վերջում արդեն 4 միլիոն 300 հազար դրամ:

Նույն 2023 թ. ընթացքում կարող ենք տեսնել պաշտոնյայի ստացած եկամուտները Արմավիրի համայնքապետարանից եւ համայնքապետարանի աշխատակազմից: Ընդհանուր նա վաստակել է մոտ 8 միլիոն 400 հազար դրամ: Դա փոքր-ինչ պակաս է պաշտոնյայի՝ 2022թ եկամուտներից, այդ ժամանակ Արմավիրի համայնքապետ եղած Խուդաթյանը վաստակել էր 8 միլիոն 600 հազար դրամ, որից 1 միլիոն 500 հազար դրամը այլ եկամուտներ են ֆինանսների նախարարությունից:

Դավիթ Խուդաթյանը հայտարարագրում ներկայացրել է նաեւ իր ստացած վարկերը եւ փոխառությունները: 2023թ հայտարարագրում այն տարեսկզբին կազմում էր 20 միլիոն 300 հազար դրամ, որից 19 մլն դրամը բնակարանի հիփոթեքային վարկի մայր գումարի մնացորդն է:

ԱՐՄԵՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԿԿՐՃԱՏՎԻ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմն ամբողջ աշխարհում ԱՄՆ դեսպանատներին խնդրել է նախապատրաստվել աշխատակազմի կրճատման: ԱՄՆ դիվանագիտական կորպուսի հիմնանորոգման Թրամփի ջանքերի շրջանակում դեսպանատներին հանձնարարվել է ուսումնասիրել ինչպես ամերիկացի, այնպես էլ տեղացի աշխատակիցների կրճատման հնարավորությունը՝ յուրաքանչյուրը 10%-ով, այնուհետեւ աշխատուժի ցուցակը մինչեւ փետրվարի 14-ն ուղարկել Պետքարտուղարություն, որից հետո կորոշվեն հետագա գործողությունները: Ամբողջ աշխարհում ԱՄՆ դեսպանատներում աշխատում են ինչպես դիվանագետներ, այնպես էլ տեղացի աշխատակիցներ: Ըստ Ամերիկյան դիվանագիտության ազգային թանգարանի՝դեսպանատների աշխատակիցների մեծ մասը ընդունող երկրի քաղաքացիներ են:

Թրամփը փորձում է վերափոխել դիվանագիտական կորպուսը. նա կատարողական հրաման էր ստորագրել՝ պետքարտուղար Մարկո Ռուբիոյին հանձնարարելով ապահովել իր արտաքին քաղաքական օրակարգի «հավատարիմ եւ արդյունավետ իրականացումը»:

ԶԱԽԱՐՈՎԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ Է

ԵԱՏՄ-ի եւ ԵՄ-ի շրջանակներում բոլոր նորմատիվ իրավական հիմքերն ու սակագնային համակարգերը, որոնց հիման վրա կառուցվում է փոխգործակցությունը, մեկը մյուսին բացառող բնույթ են կրում. այս մասին ասել է ՌԴ ԱԳ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ մեկնաբանելով ՀՀ ԱԺ նիստում առաջին ընթերցմամբ ԵՄ-ին անդամակցելու գործընթաց սկսելու մասին նախագծի ընդունումը: Նրա խոսքով՝ այս խնդրի բարձրաձայնումից խուսափելու, այն լղոզելու, այս կարեւոր հանգամանքը չնկատելու փորձերը պարզապես իրականության ժխտում են եւ հնարավոր է՝ ինչ-որ առումով այն մարդկանց ապակողմնորոշում, որոնց առաջարկվում է համապատասխան որոշում կայացնել:

«Իհարկե չենք ժխտում, որ դա Հայաստանի ինքնիշխան որոշումն է: Բայց հենց ՀՀ ներկայիս իշխանությունների եւ ոչ թե ՌԴ-ի, ԵՄ-ի վրա է իրենց ծրագրած քայլերի բոլոր հետեւանքները բնակչությանը ներկայացնելու, բացատրելու պատասխանատվությունը: Սա պետք է հասկանալ: Առհասարակ, երբ երկրում ընդունվում են նման բախտորոշ որոշումներ անցկացվում են սոցհարցումներ, հանրաքվեներ, նախապատրաստական աշխատանքներ, որպեսզի բացատրվեն բոլոր նրբությունները: Այստեղ պետք է ազնիվ լինել: Բայց դրանով պետք է զբաղվեն նրանք, ովքեր երկրի ներսում նման կոչեր են անում, այլ ոչ թե դրսից ինչ որ մեկ՝ ՌԴ-ն կամ ԵՄ-ն», - ասել է նա:

Ըստ ՌԴ ԱԳ պաշտոնական ներկայացուցչի՝ պետք է նաեւ խոսել այս հարցում այլ պետությունների փորձի մասին, բերել կոնկրետ օրինակներ, թե ինչպես է դա տեղի ունեցել նորագույն պատմությունում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Նիկոլ Փաշինյանը Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակում հանդիպում է ունեցել «Ռասմուսեն Գլոբալ» միջազգային քաղաքական խորհրդատվական կազմակերպության հիմնադիր նախագահ եւ ՆԱՏՕ-ի նախկին գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենին: Զրուցակիցները Քննարկել են Հարավային Կովկասում անվտանգությանն ու կայունությանը, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացին վերաբերող հարցեր, երկուստեք կարեւորվել են այդ ուղղությամբ շարունակական ջանքերը:

ԴԱՏԱԽԱՋՆԵՐԸ ՊՆԴՈՒՄ ԵՆ

ԱՄՆ 14 նահանգների գլխավոր դատախազներից բաղկացած խումբը դատի է տվել Իլոն Մասկին եւ նախագահ Դոնալդ Թրամփին՝ հիմնավորելով, որ այն լիազորությունները, որոնք Սպիտակ տունը տվել է միլիարդատիրոջը եւ նրա Կառավարության արդյունավետության վարչությանը (DOGE), հակասահմանադրական է: Արիզոնայի, Միչիգանի, Ռոդ Այլենդի եւ այլ նահանգների դեմոկրատ գլխավոր դատախազների հայցն ուղղված է Մասկի անսահմանափակ լիազորությունների դեմ: Նրանց խոսքով՝ DOGE-ն առաջնորդում է Թրամփի վարչակազմի ջանքերը՝դաշնային աշխատուժը կտրուկ նվազեցնելու, գործակալությունները կազմալուծելու եւ զգայուն տվյալների դաշտ մուտք գործելու ուղղությամբ: Գլխավոր դատախազները պնդում են, որ Թրամփը խախտել է Սահմանադրության նշանակումների մասին դրույթը՝ ստեղծելով DOGE ոչ պաշտոնական կառավարական գործակալությունն առանց Կոնգրեսի հավանության, եւ նրան տվել է անսահման լիազորություններ՝առանց Սենատի հետ խորհրդակցելու եւ առանց նրա համաձայնության: Նահանգները պահանջում են դատարանի որոշում, որը թույլ կտա արգելափակել Մասկի կողմից իրականացվող կառավարության ֆինանսավորման փոփոխությունները, պայմանագրերի չեղարկումը, կադրային որոշումների կայացումը եւ այլն:

ՈՐՔԱՆ Է ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ

Ի վերջո որքա՞ն է Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքը: Այս մասին անդրադարձել է էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը: «Վերջերս շատ եմ ստանում նամակներ, որ ինչ ենք անելու կամ ինչպես եղավ, որ ՀՀ արտաքին պարտքը դարձավ 12 միլիարդ դոլար: ՀՀ արտաքին պարտքը 12 միլիարդ դոլար չէ, ՀՀ արտաքին պարտքը 5 միլիարդ 962 միլիոն դոլար է: Այն մարդիկ, որոնք որ տարածում են 12 միլիարդ թիվը կամ տեղեկացված չեն կամ միտումնավոր են նրանք անում»,-ասել է Պապոյանը: «Մեր ամենամեծ հակառակորդը մեր չիմացությունն է»,-ասել է նա:

ՏԻԿՆՈՋ ԱՆՈՒՆԸ ՉԿԱՐ

ԱՄՆ ԱՅՑԸ՝ 3 ՄԼՆ 361 ՀԱԶԱՐ 119 ԴՐԱՄ

Փետրվարի 3-ից 7-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի պատվիրակությունը գտնվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների մայրաքաղաք Վաշինգտոնում, որի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվել է 3 մլն 361 հազար 119 դրամ: Այս մասին ArmLur.am-ին հայտնել են Վարչապետի աշխատակազմից հարցմանն ի պատասխան:

Վարչապետ Փաշինյանի այցը Ամերիկա շատ հարցեր է առաջացրել, եւ գրեթե որեւէ մեկը պատասխան չի ստացել: Թե ինչ էր անում հայկական պատվիրակությունը վարչապետի մակարդակով Վաշինգտոնում անցկացվող 5-րդ ամենամյա Միջազգային կրոնական ազատության գագաթնաժողովին, ինչպես նաեւ ինչ էր կորցրել աթեիստ Արսեն Թորոսյանը «Ազգային աղոթքի նախաճաշին» վարչապետի եւ կառավարական պատվիրակության հետ, հարցական է:

Ըստ վարչապետի պաշտոնական կայքի՝ նա հանդիպումներ է ունեցել ԱՄՆ սենատորների եւ վերլուծական կենտրոնների ներկայացուցիչների հետ: Միայն այցի վերջին օրը Փաշինյանը լուսանկար հրապարակեց Սպիտակ տնից, որում ԱՄՆ փոխնախագահ Ջեյմս Դեյվիդ Վենսի հետ է: Վարչապետի պաշտոնական կայքում լուսանկարն ուղեկցվում էր շատ հակիրճ տեքստով. հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստան-ԱՄՆ երկկողմ հարաբերություններին, ինչպես նաեւ տարածաշրջանային օրակարգին վերաբերող հարցեր: Փաշինյանն իր էջում Սպիտակ տուն այցը որակել է որպես ճանաչողական եւ նշել, որ Վենսի հետ լավ խոսակցություն է ունեցել:

Թե դրանք ինչ «լավ խոսակցություններ էին», գեթ մեկ հայ մարդ այդպես էլ չհասկացավ:

Փաշինյանի հրապարակումներից հասկանում ենք, որ Աննա Հակոբյանն ուղեկցել է նրան, սակայն պատվիրակության կազմում Հակոբյանի անունը բացակայում էր:

ArmLur.am-ի հարցմանն ի պատասխան վարչապետի աշխատակազմից փոխանցել էին, որ Աննա Հակոբյանի՝ ԱՄՆ մեկնելու ծախսերը կատարվել են անձնական միջոցների հաշվին:

Համացանցում շատերը վարչապետի՝ ԱՄՆ այցը որակեցին տեղեկատվական արշավ, որը կարող էր հասարակության «աչքերին թոզ փչել» եւ տպավորություն ստեղծել, որ հայ-ամերիկյան հարաբերություններ գոյություն ունեն: Սակայն հարկ է նշել, որ Թրամփի նախագահ դառնալուց հետո ռուս-ուկրաինական հարաբերություններն ավելի առաջնային են, քան Փաշինյանի հետ հանդիպումը, հայն ու Հայաստանը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

Կիպրոսում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Տիգրան Մկրտչյանը՝ Կիպրոսի Հանրապետությունում դիվանագիտական առաքելության ավարտի կապակցությամբ հանդիպել է Կիպրոսի Ներկայացուցիչների պալատի նախագահ Անիտա Դիմիտրիուի հետ: Դեսպանը տեղեկացրել է Հայաստանի Ազգային ժողովի կողմից նախօրեին «Եվրոպական միությանը ՀՀ անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» օրենքի նախագծի առաջին ընթերցմամբ ընդունման մանրամասները: Ներկայացվել են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի կնքման ուղղությամբ Հայաստանի ձեռնարկած քայլերը, տարածաշրջանային զարգացումները: Նա վերահաստատել է Կիպրոսի աներկբա աջակցությունը Հայաստանի տարածքային ամբողջականությանը եւ սուվերենությանը:

ՎԵՐԾԱՆՈՒՄԸ ԿԱ

«Ադրբեջանական ավիաուղիներ»-ի (AZAL) ինքնաթիռի անձնակազմն ինքնուրույն որոշել է թռչել Բաքու, ապա՝ Ակտաու: Խոսակցության ամբողջական վերծանումը հրապարակել է Baza.io-ն: Ձայնագրությունները ցույց են տալիս, որ Գրոզնիում վայրէջք կատարելուց առաջ օդաչուների խցիկում խուճապ է եղել. անձնակազմը պատրաստ չի եղել աշխատել GPS ազդանշանի բացակայության կամ դրա խաթարման պայմաններում: Երկրորդ օդաչուն խոստովանել է, որ երբեք չի կատարել NDB կառավարում (заход за приводом): Դիսպետչերները երեք անգամ հարցրել են օդաչուներին՝ արդյոք ամեն ինչ կարգի՞ն է ինքնաթիռում, եւ արդյոք կապիտանը նախատեսում է արտակարգ դրություն հայտարարել: Նրանց ասել են, որ ինքնաթիռում ամեն ինչ կարգին է: Բացի այդ, թռչունների հետ հարվածի եւ ինքնաթիռում գազի բալոնի պայթյունի մասին տեղեկություն է հայտնել օդանավի հրամանատարը: Ինքնաթիռի կապիտանի եւ երկրորդ օդաչուի խոսակցություններից պարզ է դառնում, որ Գրոզնիի օդանավակայանում վայրէջքի երկու փորձերն էլ անհաջող են ավարտվել՝ չնայած դիսպետչերների օգնությանը: Դրանից հետո անձնակազմի կապիտանը որոշում է թռչել նախ Բաքու, իսկ հետո՝ Միներալնիե Վոդի: Բաքվից Գրոզնի թռչող ադրբեջանական Embraer 190 ինքնաթիռը 2024թ. դեկտեմբերի 25-ի առավոտյան վթարի է ենթարկվել Ղազախստանի արեւմտյան Ակտաուի մոտակայքում: Ինքնաթիռում եղել է 67 մարդ, որոնցից 38-ը զոհվել են, 29-ը՝ ողջ մնացել:

ՄՈՐՈՒՔ Է ՊԱՀՈՒՄ

ՔՊ-ական Կարեն Սարուխանյանը թիմակիցների կողմից մերժվելուց հետո որոշել է մորուք պահել՝ նմանվելով հեղափոխական Նիկոլ Փաշինյանին: Հիշեցնենք, որ ի սկզբանե ՔՊ-ական պատգամավորը պայքարում էր Գյումրիի համայնքապետի պաշտոնի համար: Կուսակցության վարչության նիստում անգամ քննարկվել էր նրա թեկնածությունը:Բայց արի ու տես, որ Փաշինյանն անակնկալ էր պատրաստել Սարուխանյանի համար: ՔՊ վարչության նիստի ժամանակ հենց բոլորի ներկայությամբ Կարեն Սարուխանյանին՝ իր համար վստահելի բժշկի եւ իր անվտանգության աշխատակցի ուղեկցությամբ թմրանյութի թեստ հանձնելու էր ուղարկել:

ԿՄԱՍՆԱԿՑԻ

«Իմ հզոր համայնք» կուսակցությունը հայտարարությամբ է հանդես եկել՝ նշելով, որ Գյումրու քաղաքապետի ընտրություններին կմասնակցեն Ռուբեն Մխիթարյանի առաջնորդությամբ: ««Իմ հզոր համայնք» կուսակցությունը, հավատարիմ մնալով իր կողմից հռչակված արժեքներին, այդ թվում խիստ կարեւորելով աշխատանքը համայնքներում, որոշում ընդունեց Գյումրու քաղաքապետի ընտրություններին մասնակցել Ռուբեն Մխիթարյանի առաջնորդությամբ: Նման որոշումն առավել քան բնական է՝հաշվի առնելով, որ երկար տարիներ ճանաչում ենք Ռուբեն Մխիթարյանին, մեր պատկերացումներն ու տեսլականը գրեթե համընկնում են: Վստահ ենք, որ սկզբունքային գործիչ եւ լավ գյումրեցի Ռուբեն Մխիթարյանը կարող է լինել Գյումրի քաղաքի պատշաճ եւ արդյունավետ քաղաքապետ եւ իր առաջնորդած թիմով լավագույնս ծառայել Գյումրիին եւ գյումրեցուն»»,- ասվում է հայտարարությունում:

ԻՆՉ ԵՆ ՓՆՏՐԵԼ

ՊԱՐԵԿՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՍՏԻՊԵԼ ԵՆ ԻՋԵՑՆԵԼ ՏԱԲԱՏԸ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ պարեկային ծառայությունը փետրվարի 10-ին Ալավերդի քաղաքում կանգնեցրել է վարորդ Զորայր Շահվերդյանի ավտոմեքենան՝ ստուգելու պատճառաբանությամբ: Պարեկները տղամարդուց պահանջել են հենց փողոցում տաբատն իջեցնել՝ անձնական խուզարկության համար: Ըստ պարեկների՝ կասկածներ են ունեցել, որ զենք կա քաղաքացու մոտ:

Շահվերդյանը, բնականաբար, հրաժարվել է կատարել պարեկային ծառայողների տարօրինակ պահանջը՝ փողոցում տաբատն իջեցնելու վերաբերյալ: Դրանից հետո քաղաքացու եւ պարեկների միջեւ վիճաբանություն է սկսվել:

Արդյունքում Շահվերդյանին ձերբակալել, տարել են ոստիկանության Ալավերդու բաժին ու այնտեղ բռնություն կիրառել՝ ստիպելով ոստիկանության ներսում իջեցնել շալվարը:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ երեկ դատարանը այսքանից հետո որոշում է կայացրել Զորայր Շահվերդյանին կալանավորել միանգամից 2 հանցակազմով. խուլիգանության եւ իշխանության ներկայացուցիչների նկատմամբ սպառնալիքներ հնչեցնելու քրեական վարույթի շրջանակներում:

ՆԳՆ-ից ArmLur.am-ին հայտնել են, որ նշանակվել է ծառայողական քննություն:

Ի դեպ ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ կալանավորված Շահվերդյանը դեռես 2023 թվականին իրավապահների տեսադաշտում է եղել: Ալավերդի քաղաքի երկաթգծի կայարանի թաղամասում է գտնվում 35-ամյա Զորայր Շահվերդյանին պատկանող ավտոլվացման կետը, որի ուղղությամբ Լոռու մարզի բնակիչ 33-ամյա Ալեքսանդր Մելիքյանը իր մոտ գտնվող հրազենով մի քանի անգամ կրակոցներ էր արձակել: Դեպքի վայրում հայտնաբերվել են կրակված պարկուճներ:

Նկատենք, որ անկախ ենթադրյալ հանցագործի վարքագծից, ոստիկաններն իրավունք չունեն քաղաքացու արժանապատվությունը նվաստացնել եւ պահանջել նրանից իջեցնել տաբատը: Նույնիսկ հանցագործը ունի իրավունքներ: Իսկ ՆԳ նախարար Արփինե Սարգսյանը հաճախ է խոսում օրինականությունից, իրավունքից: Սա բարեփոխված ոստիկանության վարքագի՞ծ է:

Հիշեցնենք, որ հունվարի 16-ին տեղի ունեցավ Ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանի տարեկան ամփոփիչ:

Նա ներկայացրել էր նախարարության եւ ենթակա ծառայությունների 2024 թվականին կատարած աշխատանքները, բարեփոխումների շնորհիվ արձանագրված արդյունքները:

Ըստ Արփինե Սարգսյանի՝ ամբողջապես ձեւավորվել է ժողովրդավարական նոր ինստիտուտ՝ այդպիսով երաշխավորելով բարձր հաշվետվողականություն խորհրդարանի, եւ դրանով իսկ՝ նաեւ ժողովրդի հանդեպ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՉՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ՎԻՃԵԼ ԵՆ

Երեկ Համայնքային ոստիկանության Նուբարաշենի բաժնում հաղորդում է տվել «Երեւան ավտոբուս» ընկերության մի վարորդ: Նա հայտնել է, որ նույն օրը, առավոտյան ժամը 7.40-ի սահմաններում, Նուբարաշենի 11-րդ փողոցում գտնվող ավտոբուսների վերջնակետում, ուղեվարձը չվճարելու պատճառով իր հետ վեճի են բռնվել երեք անծանոթ երիտասարդներ, որոնցից մեկը բռունցքով հարվածել է իր դեմքին եւ մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով մարմնական վնասվածք: Հաղորդում է ներկայացրել նաեւ «Երեւան ավտոբուս» ընկերության մեկ այլ վարորդ: Ըստ նրա, նկատելով գործընկերոջ հետ վիճաբանությունը, միջամտել է, եւ այդ ընթացքում ինքը նույնպես երիտասարդների հարվածների արդյունքում ստացել է մարմնական վնասվածք: Նուբարաշենի համայնքային ոստիկանների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է վարորդների հետ վիճաբանած երիտասարդներից երկուսի ինքնությունը: Ձեռնարկվում են միջոցներ նրանց հայտնաբերելու եւ երրորդ անձի ինքնությունը պարզելու ուղղությամբ: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՍՏԱՑԵԼ Է

2025թ. փետրվարի 12-ին Հայաստանի Հանրապետությունը ստացել է 1979 թվականի Եվրոպայի վայրի բնության եւ բնական միջավայրի պահպանության մասին Բեռնի կոնվենցիայի շրջանակներում հարուցված արբիտրաժային գործով Ադրբեջանի Հանրապետության կողմից ներկայացված հայցադիմումը: Սա բխում է արբիտրաժային տրիբունալի կողմից հաստատված ընթացակարգային օրացույցից՝ սահմանված 2024 թվականի ապրիլի 12-ի առաջին դատավարական լսումից հետո, որի ընթացքում կայացվել են Հայաստանի Հանրապետության համար բարենպաստ մի շարք որոշումներ:

Հայաստանը շարունակելու է վճռականորեն պաշտպանել իր դիրքորոշումը տվյալ վարույթում: Ադրբեջանի ներկայացրած իրավական դիրքորոշումը հիմնված է Բեռնի կոնվենցիայի այնպիսի մեկնաբանության եւ կիրառման վրա, որը չի համընկնում դրա նպատակների եւ առարկայի հետ, այն է՝խթանել պետությունների միջեւ համագործակցությունը՝ վայրի բուսական եւ կենդանական աշխարհը եւ դրանց բնական միջավայրերը պահպանելու համար:

Հակառակ Ադրբեջանի պնդումների՝ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի եւ այլ անկախ մարմինների զեկույցները փաստացի վկայում են, որ շրջակա միջավայրին հասցված վերջին տարիների վնասի պատասխանատուն հենց Ադրբեջանն է: Հայաստանը հերքելու է Ադրբեջանի անհիմն պահանջները, ներառյալ՝ փոխհատուցման պահանջը: Հայաստանը, Բեռնի կոնվենցիայի անդամ պետություն դառնալուց ի վեր, հետեւողականորեն հավատարիմ է իր հանձնառությանը՝ պահպանելու տարածաշրջանի վայրի բնությունն ու շրջակա միջավայրը: Սա արտացոլվում է ինչպես Հայաստանի բնապահպանական քաղաքականության մեջ, այնպես էլ Բեռնի կոնվենցիայի Մշտական հանձնաժողովի աշխատանքներում ակտիվ ներգրավվածությամբ:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՐՎԱԾՆԵՐ Է ՀԱՍՑՐԵԼ ԿՆՈՋԸ

Արսեն Հ.-ին մեղադրանք է առաջադրվել իր մերձավոր ազգական (կին) Աննա Ն.-ի հետ վերջինիս կամքին հակառակ, բռնություն գործադրելով սեռական հարաբերություն ունենալու համար: Գործը դատարան է ստացվել 2024 թվականի փետրվարի 21-ին եւ մակագրվել դատավոր Հայկ Պետրոսյանին: Խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Նշվում է, որ Արսեն Հ.-ը եւ Աննա Ն.-ն 2023 թ.-ի հունվարի 15-ից սկսել են շփվել եւ ընկերություն են արել, իսկ արդեն մարտ ամսվա կեսերից Արսեն Հ.-ի առաջարկությամբ տեղափոխվել ու համատեղ բնակվել են Արարատի մարզի բնակարաններից մեկում, որի ընթացքում էլ փաստացի վարել են ամուսնական կյանք եւ ունեցել են սեռական հարաբերություններ:

2023 թվականի մայիսի 18-ին նշված անձինք բնակարանի խոհանոցում նախաճաշել են, որի ընթացքում էլ միասին ալկոհոլ են օգտագործել: Ապա Արսեն Հ.-ը սկսել է ձեռքերով հպվել Աննա Ն.-ի ոտքերին, կրծքերին, ինչի կապակցությամբ կինը հայտնել է, որ դադարեցնի, չի ցանկանում, որ տղամարդը դիպչի իրեն: Այնուհետեւ Աննա Ն.-ը գնացել է ննջասենյակ, որտեղ Արսեն Հ.-ը մերժում ստանալուց հետո նրա կամքին հակառակ սեռական հարաբերություն ունենալու նպատակով բռնություն է գործադրել վերջինիս նկատմամբ, այն է՝նախ հրել ու գցել է մահճակալին, ապա բռնուցքով հարվածներ է հասցրել նրա գլխին, ձեռքին, ձախ աչքին, ծնոտին, ապա Աննա Ն.-ի կամքին հակառակ համբուրել է նրան, հանել է նրա հագին առկա հագուստները եւ բնական եղանակով սեռական հարաբերություն է ունեցել վերջինիս հետ: Վերը նշված գործողությունների արդյունքում էլ Աննա Ն.-ի առողջությանը պատճառվել է թեթեւ մարմնական վնասվածքներ:

Կայացել են մի քանի դատական նիստեր, հաջորդ դատական նիստը նշանակված է փետրվարի 19-ին:

Honda–Ն ԱՅՐՈՂԻՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ

Սեպտեմբերի 24-ին Կոմիտասի պողոտա-Վրացական փողոցի խաչմերուկի հարեւանությամբ գտնվող Կոմիտասի 46 շենքի բակում այրել էին «Honda Kona» մակնիշի մեքենան: Արաբկիրի ոստիկանները 30-ից ավելի հասցեներում են եղել, իրականացրել են մի քանի օպերատիվ-հետախուզական աշխատանքներ, ինչի շնորհիվ էլ օպերատիվ տեղեկություններ են ստացել, որ նշված արարքը կատարել է Երեւանի բնակիչ 23-ամյա Գուրգեն Տոնականյանը: Նախաքննության շահերից ելնելով՝ այս պահին որոշ հանգամանքներ չենք հրապարակում, սակայն թիրախում եղել է Honda մակնիշի ավտոմեքենան, որի սեփականատերը համացանցում հայտնի տիկտոկեր 45-ամյա Հասմիկ Կ.-ն է:

Գուրգեն Սամվելի Տոնականյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ուրիշի գույքը վնասելու եւ ոչնչացնելու դիտավորությամբ, հրկիզման եղանակով այրել է Հասմիկ Կակոսյանին պատկանող «Honda Kona» մակնիշի 88 HB 838 h/ h, Արտակ Մանուկյանին պատկանող «Opel» մակնիշի 36 DG 845 h/h եւ Միքայել Ամբարյանին պատկանող «BMV X6» մակնիշի WW 333 WW h/h ավտոմեքենաները՝ վերջիններիս պատճառելով առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 7.550.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 13-ից 14-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 134 դեպք, որից 2-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

10–15.000 ԴՐԱՄ՝ ԴԻՐՔԵՐՈՒՄ ՍՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նիկոլ Փաշինյանը իշխանության գալով բանակին կերակրեց Աննա Հակոբյանի արթիկցի ընկերուհու ջերմոցներում աճեցված ելակով՝դա ներկայացնելով որպես զինվորների սննդի մատակարարման մեծ բարեփոխում: Տավուշի մարզի առաջնագծում ծառայող պայմանագրային զինծառայողները հայտնեցին, որ առաջնագծում ծառայելու հերթափոխի՝ երկու շաբաթվա ընթացքում դիրքերում սնվելու համար յուրաքանչյուրը տրամադրում է 10-15 հազար դրամ, որով գնում են միս, ճաշ եփելու համար սնդատեսակներ եւ այլն: Մարտական դիրքերը պահողներին դուր չեն գալիս պաշտպանության նախարարության տրամադրած մակարոնեղենը, պահածոները, երշիկը, նրանցից շատերը դիրքերում դրանք չեն օգտագործում: Նման կերպ են վարվում նաեւ պայմանագրայինների հետ նույն դիրքերը պահող, միասին ծառայություն իրականացնող, 5 տարի ժամկետով պայմանագիր կնքած, «Պաշտպան հայրենյաց» ծրագրի զինծառայողները:

ԽԱԽՏԵՑ ՍԱՀՄԱՆԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին նախկինում բազմաթիվ անգամ հարցապնդումներ եմ արել, թե նա, որպես մարզպետ, մարզի համայնքներում՝ Դիլիջանում, Նոյեմբերյանում եւ Բերդում ինչո՞ւ քաղաքացիների ընդունելություն չի կատարում: Այդ հարցապնդումները, դրանց վերաբերյալ հրապարակումներս, քննադատությունը արդյունք տվեցին: Հունվարի 15-ին մարզպետ Ղալումյանը որոշում է ընդունել «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2019թ. հուլիսի 24-ի թիվ 103-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին»: Ըստ այդ որոշման հավելվածի՝ մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելությունը կազմակերպվում է յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը՝ մարզպետի նշանակած ժամին, Նոյեմբերյանի համայնքապետարանում՝ հունվար, մայիս, սեպտեմբեր ամիսներին,Բերդի համայնքապետարանում՝ փետրվար, հունիս, հոկտեմբեր ամիսներին, Դիլիջանի համայնքապետարանում՝մարտ, հուլիս, նոյեմբեր ամիսներին, մարզպետի աշխատավայրում՝ ապրիլ, օգոստոս, դեկտեմբեր ամիսներին: Հունվարին Նոյեմբերյանի համայնքապետարանում պետք է կայանար մարզպետի ընդունելություն, սակայն չի կայացել: Տավուշի մարզպետարանի ֆեյսբուքյան էջը փետրվարի 11-ից տեղեկացրել է, որ փետրվարի 14-ին, ժամը 14-ից Նոյեմբերյանի համայնքապետարանի շենքում մարզպետը կկատարի քաղաքացիների ընդունելություն: Այդ հայտարարությունը մարզպետարանի պաշտոնական կայքում չի տեղադրվել: Մարզպետը խախտել է քաղաքացիների ընդունելության իր սահմանած ժամանակացույցը, ըստ որի Նոյեմբերյանում քաղաքացիների ընդունելություն պետք է կայանար հունվարին, իսկ փետրվարի 14-ի ընդունելության մասին էլ իրազեկումը կատարվել է կիսատ-պռատ, քիչ թվով նոյեմբերյանցիներ են հետեւ ում մարզպետարանի ֆեյսբուքյան էջին, որ իրազեկվեին այդ ընդունելության մասին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

10 ՏԱՐԻՑ ԱՆՑ

ՄԻԵԴ–Ը ԱՆՕՐԻՆԱԿԱՆ Է ՃԱՆԱՉԵԼ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) հրապարակել է 2015 թվականի ամռանը «Էլեկտրիկ Երեւանի» բողոքի ակցիայի ցրումը եւ Հովհաննես Իշխանյանի կալանավորումը անօրինական ճանաչելու որոշումը:

«Էլեկտրիկ Երեւանի» դեպքերից 10 տարի անց միայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կայացրեց անօրինականության մասին որոշում: «Իշխանյանն ընդդեմ Հայաստանի» գործով ՄԻԵԴ-ի որոշման մեջ ընդգծվում է, որ այս հանգամանքներում ոստիկանության բացառիկ հսկողության տակ գտնվող կալանավորին ավելի քան յոթ ժամ պահելը հավասարազոր է ազատությունից զրկելու: Դատարանը նաեւ գտել է, որ կալանավորման հիմքեր չկան:

Ամեն բան սկսվեց 2015 թվականի հունիսի 19-ին, երբ «Ոչ թալանին» նախաձեռնությունը կազմակերպեց բազմահազարանոց հանրահավաք Երեւանի Ազատության հրապարակում՝ պահանջելով չեղարկել էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման որոշումը: Հունիսի 22-ին, չստանալով իրենց պահանջների պատասխանը, ցուցարարները երթով շարժվեցին դեպի Բաղրամյան պողոտա, որտեղ սկսեցին նստացույց: Հունիսի 23-ի առավոտյան ոստիկանությունը ուժ կիրառեց՝ցրելու նստացույցը, ինչի հետեւանքով ձերբակալվեց 237 քաղաքացի, այդ թվում՝ լրագրողներ, ավելի քան 25 մարդ հոսպիտալացվեց: Նրանց բոլորի դեմ հարուցվել էր քրեական գործ «խուլիգանություն» հոդվածով:

ՄԻԵԴ վճռում նաեւ ընդգծվում է, որ «Էլեկտրիկ Երեւանի» բողոքի ցույցի ժամանակ ձերբակալությունները կատարվել են զանգվածային՝ առանց դիմողի գործողությունների հանցավորության անհատական գնահատման եւ առանց հանցագործության կատարման հիմնավոր կասկածի: Հովհաննես Իշխանյանը, ում կալանավորման մասին ՄԻԵԴ-ը որոշում է կայացրել երեկ, մասնակցել է 2015 թվականի «Էլեկտրիկ Երեւան» բողոքի ակցիաներին՝ որպես ակտիվիստ: Հունիսի 23-ի առավոտյան, երբ ոստիկանությունը ջրցան մեքենաների միջոցով ցրեց Բաղրամյան պողոտայում նստացույց իրականացնող ցուցարարներին, Հովհաննես Իշխանյանը բերման ենթարկվեց եւ տեղափոխվեց Շենգավիթի ոստիկանության բաժանմունք: Այնտեղ նա ենթարկվել էր խուզարկության, նրանից վերցրել էին մատնահետքեր, եւ նա Ձերբակալության պահման վայրում պահվեց մոտ յոթ ժամ՝ առանց սննդի եւ թաց հագուստով: Նրան որեւէ մեղադրանք չառաջադրվեց, եւ նույն օրը երեկոյան նրան ազատ էին արձակել:

Այս իրադարձությունները լայն արձագանք գտան ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային մակարդակում: «Էլեկտրիկ Երեւան» շարժումը դարձավ քաղաքացիական ակտիվության խորհրդանիշ՝ ընդգծելով հասարակության պահանջը՝ մասնակցելու որոշումների կայացման գործընթացին եւ պաշտպանելու իրենց սոցիալական իրավունքները: Այժմ էլ կան բողոքի թափ ստացած ակցիաներ, որոնք, սակայն, իմպուլսիվ են եւ ոչ մշտական, որն էլ չի կարող ունենալ «Էլեկտրիկ Երեւան» նախաձեռնության պես արդյունքներ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՌԱՆՑ ԱՐՑԱԽԻ ՔԱՐՏԵԶ

Արցախցի, զարգացման կենտրոնի հիմնադիր Անուշ Աթաջանյանն ահազանգում է XAXALOVE ընկերության վարքի մասին.

«Լավ, որ ղեկավարությունը թուրք են՝ դա արդեն հասկացան գրեթե բոլորը: Բա իրենց շահեր պաշտպանողները ի՞նչ են...

Այսօր զանգահարում են ինձ XAXALOVE ից, թե բա հիշում ե՞ք, դուք դեկտեմբերին մեզանից մեծ քանակի խաղալիքների պատվեր եք արել, որոնց մեջ Հայաստանի փազլ քարտեզներ կար՝ Արցախով: Կարողա՞մ դեռ ձեզ մոտ են էտ քարտեզները, հետ ենք հավաքում, որպեսզի նոր պարտիա թողարկենք:

հարցնում եմ.

-Այսինքն, առանց Արցախի՞

-Դե մեզ այդպես են հրահանգել:

Ջղայնացա, ասեցի.

-Դուք գիտեք, ես ինքս Արցախից եմ ու զանգում նման բան եք ինձ ասում՞: Հաջորդ քարտեզը կպահանջեն առանց Սյունիքի կամ Երեւանի թողարկել, անելո՞ ք: Խիզախություն չունե՞ք հրաժարվել: Դուք որ ձերից այդքան հեշտ հրաժարվում եք, բա էլ թուրքին ի՞նչի եք մեղադրում:

Ջղայնացած անջատեցի հեռախոսը:

Նորից զանգեց, փորձում է արդարանալ՝ բա փորձել ենք, էսքան ժամանակ պահել ենք, բայց մեզ չեն թույլատրում... նման բաներ...

Ասեցի,

-Ես ոչ մի հատ չեմ վերադարձնի, ու էլ երբեք ձեր մոտից պատվեր չեմ անի:

P.S. Այնքան ուրախ էի, որ Արցախով քարտեզ էին թողարկում: Բացի այլ խաղալիքներից մոտ 30 քարտեզ գնել էի, ու ամանորյա նվեր տվել երեխաներիս:

Հիմա, հերիք չէ էլ Արցախով չեն թողարկելու, մի հատ երկու ամիս առաջ վաճառածը ուզում են ետ հավաքեն! Թե բա չեն թույլատրում...

P.S.S. Հիշեցնեմ, տվյալ կազմակերպությունը արտադրում է զարգացնող եւ ուսուցողական խաղեր հայ մանուկների համար: Ուսուցողական!!

Այսինքն թուրքը չէ, հայկական արտադրողը մեր իսկ ազգային արժեքներից հրաժարվում է եւ այդ էլ ուսուցանում!

Հիմա ես չեմ, դուք եք... ի՞նչ ասես նման կազմակերպությանը, նման հակահայկական մոտեցմանը: Վստահ եմ՝ ստորեւ նկարի քարտեզում պատկերված Արարատն էլ չի լինի նոր «պարտիայում»

Հետո էլ կասեն «մինչեւ վերջ չեք կռվել»:

ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏԵՐ

Պետական եկամուտների կոմիտեն ընդունել է Հայաստանում գտնվող Եվրոպական Միության փորձագիտական առաքելությանը՝ մուտքի արտոնագրերի ազատականացման գործողությունների ծրագրի մշակման նպատակով: ԵՄ գործընկերներին ներկայացվել են մաքսային վարչարարության ոլորտում ՊԵԿ ռազմավարական հիմնական ուղղությունները, վերջին տարիներին իրականացված բարեփոխումները, մարտահրավերները եւ զարգացման հեռանկարները: Քննարկվել են նաեւ սահմանային ընթացակարգերի կազմակերպմանն առնչվող մի շարք հարցեր:Առաքելության շրջանակում ԵՄ պատվիրակությունը այցելել է Բագրատաշեն եւ Այրում սահմանային անցակետեր՝ տեղում ծանոթանալու մաքսային մարմինների գործունեությանը: Նախատեսվում է նաեւ այց «Զվարթնոց» օդանավակայան:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 9 պատահար. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՄԱՔՍԱՅԻՆ

ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է 1 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ

Պետական եկամուտների կոմիտեն, հաշվի առնելով հանրային հետաքրքրությունը՝ ֆիզիկական անձանց կողմից ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետություններում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման վերաբերյալ, հիշեցնում է, որ այդ տրանսպորտային միջոցները Հայաստան ներմուծվում են ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի իրավական կարգավորումների համաձայն:

Օտարերկրյա ֆիզիկական անձանց, ինչպես նաեւ ԵԱՏՄ անդամ պետությունների ֆիզիկական անձանց կողմից ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետությունում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծումը Միության մաքսային տարածք, այս դեպքում՝ Հայաստանի Հանրապետություն, թույլատրվում է ոչ ավելի, քան 1 տարի ժամկետով: Այս դեպքում տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման այլ ժամկետներ սահմանող իրավական որեւէ այլ կարգավորում ներկայում չկա:

Անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ ներմուծողներին օրենսդրությունը տարանջատում է ոչ թե Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա քաղաքացիություն ունենալու, այլ «միության անձ» կամ «օտարերկրյա անձ» լինեու հանգամանքով: Եթե ֆիզիկական անձը Միության մաքսային տարածքում, այս դեպքում՝ Հայաստանում ունի մշտական բնակության վայր, ապա համարվում է «միության անձ»: Հակառակ պարագայում, այսինքն, ԵԱՏՄ-ում, այդ թվում՝ ՀՀ-ում մշտական բնակության վայր չունենալու դեպքում, անկախ ՀՀ քաղաքացիություն ունենալու կամ չունենալու հանգամանքից, ֆիզիկական անձը համարվում է «օտարերկրյա անձ»:

ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լինում են դեպքեր, երբ օտարերկրյա պետությունում գրանցված տրանսպորտային միջոցը սկզբնապես ներմուծվելով օտարերկրյա անձի կողմից՝ շահագործման նպատակով հանձնվում է այլ անձանց (այդ թվում՝ ՀՀ-ում մշտական բնակության վայր ունեցող քաղաքացիներին) եւ, միաժամանակ, ներմուծումն իրականացրած օտարերկրյա անձը լքում է երկիրը՝ այդպիսով շրջանցելով վճարումն ապահովելու պահանջը:

Նշենք, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է պատասխանատվություն. ֆիզիկական անձանց կողմից մաքսային հսկողության ներքո գտնվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի գրավոր թույլտվության հանձնելն առաջացնում է տուգանք՝ այդ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի 20 տոկոսի չափով:

ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

ՍՈՑԻԼԱԿԱՆ ԾԱԽՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

Պետական եկամուտների կոմիտեն հաղորդագրություն է տարածել՝ իրազեկելով սոցիալական ծախսի փոխհատուցումից օգտվելու քայլերի հաջորդականության մասին:

Հաղորդագրության մեջ նշվում է, որ եթե արդեն ներկայացրել եք եկամուտների հայտարարագիր եւ տարվա ընթացքում Ձեր կամ Ձեր ընտանիքի անդամների համար առողջապահության ու կրթության գծով կատարել եք սոցիալական ծախսեր, ունեք դրա դիմաց դուրս գրված հաշվարկային փաստաթուղթ (ինվոյս), ապա կարող եք դիմել եւ հետ ստանալ սոցիալական ծախսի փոխհատուցման գումարները՝ հետեւյալ քայլերով.



Քայլ 1

Մուտք գործեք Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ, ապա անցնելով «Հարկային հաշվեկշիռ» բաժին՝ «Սոցիալական ծախսեր» պատուհանում կտեսնեք, թե որքան է կազմում վերադարձման ենթակա գումարը:

Քայլ 2

Հաջորդ քայլով վերադարձեք համակարգի գլխավոր էջ եւ մուտք գործեք «Հայտարարագրեր» բաժին, ապա «Հայտարարագրերի ձեւեր»-ից ընտրեք «Դիմում՝ միասնական հաշվից գումարները վերադարձնելու համար»:

Քայլ 3

Բացված պատուհանում լրացրեք բանկային հաշվեհամարը եւ փոխհատուցման ենթակա գումարի չափը: Հաշվեհամարը լրացնելուց հետո բանկի անվանումը կլրացվի ինքնաշխատ: Դիմումը լրացնելուց հետո սեղմեք «Գրանցել» կոճակը:

Ի դեպ, եթե համակարգի «Անձնական տվյալներ» էջում նախապես լրացված է լինում բանկի անվանումը եւ հաշվեհամարը, ապա այդ տվյալները դիմումում կլրացվեն ինքնաշխատ, ինչպես եւ լրացվում են Ձեր անձնական մյուս տվյալները:

Քայլ 4

Դիմումը գրանցելուց հետո կբացվի պատուհան, որտեղ անհրաժեշտ է սեղմել «Մարում/վերադարձ» կոճակը՝ փոխհատուցումն ավելի արագ ստանալու համար: Սեղմելով այս կոճակը՝ Դուք համաձայնվում եք, որ տվյալ օրվա ավարտից հետո վերադարձ կատարվի Ձեր միասնական հաշվին: Ի դեպ, «Մարում/վերադարձ» կոճակը հասանելի է նաեւ «Հարկային հաշվեկշիռ» էջում:

Քայլ 5

Գրանցված դիմումը հայտնվում է «Լրացված հայտարարագրեր» բաժնում: Վերջին քայլով պետք է սեղմել ստորագրել կոճակը, ընտրել ստորագրության տեսակը եւ էլեկտրոնային տարբերակով ստորագրել դիմումը, ապա սեղմել «Հանձնել ՊԵԿ» կոճակը:

Վերջ, դիմումն ուղարկված է: Սոցիալական ծախսի գումարը Ձեր նշած հաշվեհամարին կփոխանցվի դիմումը ներկայացնելուց հետո մինչեւ երրորդ աշխատանքային օրը:

ԼՈՒՐԵՐ

ՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑ ԵՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հանրային քննարկման է ներկայացվել նախագիծ, որով առաջարկվում է Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարանը եւ Երեւանի հ. 9 արհեստագործական պետական ուսումնարանը վերակազմակերպել՝ ստեղծելով «Երեւանի արհեստի պետական քոլեջ» պետական ոչ առեւտրային կազմակերպություն: Հիմնավորման մեջ նշված է, որ երկու ուսումնական հաստատություններում առկա է 5 մասնագիտությունների իրականացման համընկնում եւ ունեն ուսումնական գործընթացի կազմակերպման համար մի քանի անգամ շատ տարածք, որը չի օգտագործվում եւ լրացուցիչ ֆինանսական միջոցներ են տրամադրվում պահպանման նպատակով: «Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առեւտրային կազմակերպությանն ամրացված ուսումնական մասնաշենքում ներկա պահին իրականացվում է հիմնանորոգման աշխատանքներ, որի ավարտը նախատեսված է 2025 թվականին: Մեկ այլ նախագծով առաջարկվում է Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը եւ Բյուրեղավանի արհեստագործական պետական ուսումնարանը միաձուլման ձեւով վերակազմակերպել՝ ստեղծելով Հայաստանի «Նոր Գեղիի բազմագործառութային պետական քոլեջ» պետական ոչ առեւտրային կազմակերպություն:

ԲԱՑԱՐՁԱԿ ԱՌԱՋԱՏԱՐ

«Ամերիաբանկը» դրամային ավտովարկերի պորտֆելով ՀՀ բանկային համակարգի բացարձակ առաջատարն է շուկայի ավելի քան 50% մասնաբաժնով (31.12.2024թ. դրությամբ): Ամերիաբանկի դրամային ավտովարկերի պորտֆելը 2024թ.-ին նախորդ տարվա համեմատ աճել է 49%-ով: Նույն ժամանակահատվածում Ամերիաբանկի ավտովարկերի ավելի քան 30%-ը տրամադրվել է առցանց՝ MyCar.am հարթակի միջոցով: MyCar.am հարթակն այցելուներին հնարավորություն է տալիս գտնել ցանկացած կարիքի եւ հնարավորության համապատասխան մեքենա՝ ընտրություն կատարելով առաջնային եւ երկրորդային շուկայի առաջատար դիլերների առաջարկներից: Հարթակում ներկայացված են համաշխարհային ավտոարտադրող 40 բրենդի պաշտոնական առաջարկներ, ինչպես նաեւ նոր էլեկտրամոբիլների լայն տեսականի:

2024թ.-ին նախորդ տարվա համեմատ հարթակում ներկայացված մեքենաների քանակն աճել է ավելի քան 6 անգամ, իսկ կայքի դիտումները նույն ժամանակահատվածում ավելացել են 4,5 անգամ: Հարթակը նպաստում է հաճախորդների ժամանակի խնայողությանը, օգնում գինորակ հարաբերակցության մեջ արագ կողմնորոշվելու եւ լավագույն ընտրություն կատարելու հարցում: Ջտիչերի, հաշվիչների, մեքենաների համեմատման գործառույթների շնորհիվ հնարավորինս պարզեցված է մեքենա փնտրելու եւ գտնելու գործընթացը:

Ամերիաբանկի մասին

Ամերիաբանկը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը: Թվային փոխակերպման ռազմավարության ներքո՝ Բանկը ներդնում եւ շարունակաբար կատարելագործում է շուկայում եզակի պրոդուկտներ, ծառայություններ եւ նորարարական հարթակներ, որոնք միտված են բավարարելու մարդկանց ֆինանսական եւ ոչ ֆինանսական կարիքները: Ամերիաբանկը, որպես դինամիկ զարգացող ֆինթեք միջավայր, առաջարկում է կյանքի որակը բարելավող ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

ՈՉՆՉԱՑՆՈՒՄ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանը մշտապես իր ենթակայության տակ գտնվող տարածքներում հետեւողականորեն ոչնչացրել է հայկական մշակութային կոթողները, եկեղեցիներն ու հուշարձանները, իսկ 44-օրյա պատերազմից հետո այդ հանցավոր գործելակերպը ստացավ ավելի մասսայական բնույթ:

Լեռնային Ղարաբաղում հայկական պատմամշակութային ժառանգության առանձին կտորներ վերջին շրջանում նույնպես ոչնչացվել են ադրբեջանցի վանդալների կողմից: Բոլոր տարածքներում կան ավերված ու պղծված եկեղեցիներ, հուշարձաններ: Դրանց թվում են Շուշիի Սուրբ Ղազանչեցոցը, Կանաչ ժամը, Հադրութի Մոխրենիս գյուղի Սուրբ Սարգիս եկեղեցին, որը հիմնահատակ ավերվել է, իսկ Բերձորի Սուրբ Հարություն եկեղեցին վերածվել է մզկիթի:

«Ադրբեջանցիների վայրագությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ կա հստակ ցուցում Ադրբեջանի ղեկավարության կողմից՝ ոչնչացնել, փոշիացնել այն ամենը, ինչ հայկական է, իսկ եթե հնարավոր չէ մեր կարեւորագույն հուշարձանները օրը ցերեկով, ամբողջ աշխարհի աչքերի առջեւ վերացնել, դրանք ներկայացնում են որպես ոչ հայկական: Փաստացի սա նույն քաղաքականության շարունակությունն է, որի նպատակն իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքներում հայկական հետքի մաքրումն է՝ այնպես, ինչպես ժամանակին արեցին Նախիջեւանում, որտեղ այսօր որեւէ հայկական եկեղեցի, պատմամշակութային հուշարձան, հայկական արձանագրություն չի մնացել»,- ավելի վաղ ասել էր «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը:

Ստորեւ բերված օրինակներն ասվածի լավագույն ապացույցն են: Վանդալիզմի ամենավառ դեպքերից է Մարտակերտի շրջանի Վանքասար եկեղեցին, որը գտնվում է Ստեփանակերտից Մարտակերտ տանող ճանապարհին: Ադրբեջանական Experience Azerbaijan աքաունթը X հարթակում հրապարակել է տեսանյութ, որտեղ երեւում է, թե ինչպես են գմբեթի խաչը հանում եկեղեցուց:

Քարվաճառի շրջանի Ծար գյուղի Սուրբ Սարգիս եւ Սուրբ Գրիգոր եկեղեցիները դարձան ադրբեջանական մշակութային վանդալիզմի հերթական զոհը: Լուսանկարներից պարզ է դառնում, որ եկեղեցու տարածքում արդեն սկսվել են շինարարական աշխատանքները, հանվել է Սուրբ Սարգիս եկեղեցու խաչը՝ արձանագրություններով քարերից մեկը, եւ եկեղեցու տարածքում նույնպես խաչքարերի բեկորներ չկան:

Ադրբեջանական վանդալիզմի հաջորդ զոհը Ստեփանակերտի Անդրանիկի փողոցի հուշարձանն է: Ադրբեջանը շարունակում է իրականացնել վանդալիզմի պետական քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղում:

Ադրբեջանցիների կողմից վանդալիզմի հերթական օրինակը ցուցադրող տեսանյութում երեւում է, թե ադրբեջանցիներն ինչպես են շարունակում ավերել տեղի հայկական մշակույթը՝ քանդելով «Արմենիա» հյուրանոցը, ինչպես նաեւ մշակույթի ու երիտասարդության պալատը:

Սոցիալական ցանցերում հրապարակված այս տեսանյութը Քաշաթաղի (Լաչին) շրջանից է, որտեղ երեւում է, որ Ջորախաչ եկեղեցուց խաչեր են հանվել: Սա պատմությունը խեղաթյուրելու ակնհայտ քայլ է: Ջորախաչի եկեղեցին գտնվում է Բերձորից 52 կիլոմետր հյուսիս, Խաքարի գետի Շալվա վտակի ձախ ափին՝ Արախիշ գյուղի մոտ:

Լեռնային Ղարաբաղում ադրբեջանական վանդալիզմի եւ կրոնական ահաբեկչության այս դրվագը խիստ մտահոգության տեղիք է տալիս: Ադրբեջանցի մի քանի զինվորներ մտել են հայկական եկեղեցի եւ քանդել խաչը: Ցավոք, միջազգային հանրությունը ոչ մի քայլ չի ձեռնարկել այս եւ նմանատիպ այլ գործողությունները կանխելու համար:

Հայտնի է դարձել, որ ադրբեջանցիները Ստեփանակերտում քանդել են հայ գրող Խաչատուր Աբովյանի հուշարձանը:

Քաշաթաղի շրջանի Աղանուս գյուղում ադրբեջանցի վանդալները քանդել են խաչքար-հուշարձանը:

Ադրբեջանցիները Ստեփանակերտում քանդել են Խորհրդային Միության մարշալ, ԽՍՀՄ կրկնակի հերոս Հովհաննես Բաղրամյանի հուշարձանը:

Լեռնային Ղարաբաղում քանդել են Արցախյան եւ Հայրենական մեծ պատերազմների զոհերին նվիրված հուշարձանը:

Ստեփանակերտում ադրբեջանցի վանդալները քանդել են նաեւ Կովկասի բոլշեւիկների առաջնորդ, Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ստեփան Շաումյանի հուշարձանը:

Հայտնի է դարձել, որ ադրբեջանցիները քանդել են ՀԽՍՀ ժողկոմի առաջին նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանի հուշարձանը:

Ադրբեջանցիները հանել են նաեւ ամերիկահայ բարերար, Հայաստանի ազգային հերոս Ալեք Մանուկյանի հուշարձանը:

Եվ կրկին վանդալները շարունակում են պայքարել հայկական հուշարձանների դեմ: Նրանք հանել են նաեւ հայազգի խորհրդային ծովակալ Իվան Իսակովին (Հովհաննես Տեր-Իսահակյան) նվիրված հուշարձանը:

Քանի դեռ Ադրբեջանի իշխանությունների նկատմամբ միջազգային հանրության կողմից չի ցուցաբերվում կոշտ վերաբերմունք, նրանք շարունակելու են իրենց բարբարոսական քաղաքականությունը հայկական հուշարձանների նկատմամբ, հետեւաբար այդ ամենը պետք է արձանագրվի, դրանց վերաբերյալ պատրաստվեն փաստական նյութեր եւ փոխանցվեն համապատասխան միջազգային կառույցներին, որպեսզի վերջիններս էլ իրենց հերթին ճնշում գործադրեն Ադրբեջանի վրա եւ վերջ տան հայկական մշակութային ժառանգության ոչնչացման քաղաքականությանը, որը որդեգրել է Ադրբեջանը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐՔԱԿԱՆ

ԳՈԼԻ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՂԱՆԱԿ

«Լիվերպուլը» ոչ-ոքի խաղաց «Էվերթոնի» հետ ԱՊԼ-ի 15-րդ տուրից հետաձգված խաղում: Հանդիպումը կայացավ «Գուդիսոն Պարկում» եւ ավարտվեց 2:2 հաշվով: Սա վերջին մերսիսայդյան դերբին է մարզադաշտում, որը շուտով պետք է քանդվի: «Լիվերպուլի» հարձակվող Մոհամեդ Սալահը դարձել է գոլի եւ գոլային փոխանցման հեղինակ: Եգիպտացին Պրեմիեր լիգայի իր վերջին 100 խաղում Սալահը 100 միավոր է հավաքել գոլ+գոլային փոխանցում համակարգով (62+38): Միայն երեք խաղացողների են նախկինում հաջողվել 100 կամ ավելի միավոր վաստակել այս ընթացքում՝ Ալան Շիրերը, Թիերի Անրին եւ Ռոբին վան Պերսին:

ԱՌԱՆՑ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ

«Լիվերպուլի» եւ «Էվերթոնի» նախկին մարզիչ Ռաֆայել Բենիտեսը բացատրել է, թե ինչու «կարմիրների» աջ պաշտպան եւ փոխավագ Տրենտ Ալեքսանդր-Առնոլդը պետք է միանա «Ռեալին»: Ավելի վաղ հաղորդվում էր, որ մադրիդցիները ցանկանում են անգլիացի ֆուտբոլիստի հետ պայմանագիր կնքել ազատ գործակալի կարգավիճակով: «Հարձակվող թիմում հարձակվող պաշտպանն ավելի շատ հնարավորություններ ունի գոլային փոխանցումներ կատարելու եւ իր թիմակիցների համար հնարավորություններ ստեղծելու համար: Տրենտը դա անում է «Լիվերպուլում», բայց կարող եք վստահ լինել, որ «Ռեալում» նա դա կանի տարիներ շարունակ: Որպես «Լիվերպուլի» երկրպագու՝ կարելի է ասել, որ ավելի լավ կլինի, որ Տրենտը մնա, բայց եթե նա դառնա «Ռեալի» խաղացող, դա լավ կլինի նրա եւ մադրիդյան թիմի համար»,-ասել է Բենիտես-ը: Ալեքսանդր-Առնոլդը «Լիվերպուլի» ակադեմիայի սան է: Պաշտպանի գործող պայմանագիրն ակումբի հետ նախատեսված է մինչեւ 2025 թվականի ամառը:

ԿՐԱՎԻՐՎԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ

Ֆրանսիայի հավաքականի գլխավոր մարզիչ Դիդյե Դեշամը հայտնել է, որ Մադրիդի «Ռեալի» հարձակվող Կիլիան Մբապեն կիրավիրվի հավաքական՝ մարտին կայանալիք ուսումնամարզական հավաքին: 2024 թվականի աշնանը Մբապեն բաց է թողել Ֆրանսիայի հավաքականի երկու անընդմեջ ուսումնամարզական հավաք: «Կիլիանը մարտին կլինի՞ հավաքականում: Ակնհայտ է, որ նա այնտեղ կլինի: Ինչո՞ւ նա այնտեղ չպետք է լինի»,- ասել է Դեշամը: Մարտին Ֆրանսիան Ազգերի լիգայի 1/4 եզրափակչում երկու հանդիպում կանցկացնի Խորվաթիայի հավաքականի հետ:

ՇՈՈՒ ԲԻԶՆԵՍ

«ԱՆՈՐԱ»-Ն ՆՈՄԻՆԱՑՎԱԾ Է

Հայտնի «Անորա» ֆիլմի շուրջ հետաքրքրություններն ու խոսակցությունները չեն դադարում: Ֆիլմի մասին կարծրատիպեր ու կարծիքներ ունեցողները բաժանվել են երկու մասի: Մի մասի համար ֆիլմը արվեստի գործ է, իսկ մյուս մասի համար՝ պարզապես ժամանակի կորուստ, անիմաստ կինոնկար: Նշենք, որ Շոն Բեյքերի ֆիլմում նկարահանվել են հայազգի դերասաններ Վաչե Թովմասյանն ու Կարեն Կարագուլյանը: Ֆիլմն այս տարվա «Օսկար» 2025 մրցանակաբաշխությանը նոմինացված է 6 անվանակարգերում:«Օսկարի» 97-րդ մրցանակաբաշխությունն այս տարի կկայանա մարտի 3-ին՝ Լոս Անջելեսում: Հավելենք, որ անցած շաբաթ ֆիլմը Լոս Անջելեսում Քննադատների ընտրության մրցանակաբաշխության ժամանակ հաղթել է «Լավագույն ֆիլմ» անվանակարգում: «Անորա» ֆիլմը անցած տարի Կաննի միջազգային կինոփառատոնում գլխավոր մրցանակի էր արժանացել:

ՄԱՄՆԱԿՑԵԼ Է ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ

Հայաստանն առաջին անգամ մասնակցելէ «Wine Paris» գինու աշխարհի խոշորագույն ցուցահանդեսներից մեկին: Սա կարեւոր քայլ է դարձել հայկական գինեգործության առաջմղման գործում՝ նպաստելով երկրի յուրահատուկ ժառանգությունը միջազգային ասպարեզում ներկայացնելուն: Հայաստանի ազգային տաղավարում ներկայացված էին 21 գինեգործական գործարաններ, այդ թվում՝ Alluria Wines, Armenia Wine Company, Gevorkian Winery եւ շատ ուրիշներ: Ցուցադրվեցին գինիներ, որոնք արտացոլում են հայկական տերուարի եւ խաղողի բնիկ սորտերի հարստությունը:

Wine Paris-ն առանցքային իրադարձություն է գինեգործության ոլորտում. 2024 թվականին այն համախմբեց ավելի քան 4000 ցուցահանդեսի 48 երկրներից եւ գրավեց 41000 այցելուի՝ներառյալ գնորդների, դիստրիբյուտորների – սոմելիների: Վերջին տարիներին Հայաստանն ակտիվորեն ընդլայնում է իր արտահանումը. եթե 2016 թվականին հայկական գինիները մատակարարվում էին 15 երկրների, ապա 2024 թվականին դրանց աշխարհագրությունը հասել էր մինչեւ 39 երկրի:

Տաղավարի մասնակիցների թվում էին նա եւ Hin Areni Wine, Van Ardi Wines, Voskeni Wines, Voskevaz Winery, Karas Wines եւ այլ գինեգործարաններ՝ ներկայացնելով հայկական գինեգործության լավագույն օրինակները:

● *Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում մարտի 13-ին տեղի կունենա «Լակոտը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2500, 3000, 3500 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ կենսաթոշակի անցնելու համար քաղաքացին ի՞նչ պետք է անի: Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնի:

Դիանա Պետրոսյան (63 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան հայտնում ենք, որ եթե անձը ձեռք է բերել կենսաթոշակի անցնելու իրավունք, ապա առաջին հերթին պետք է նախապատրաստի կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը եւ դիմի իր բնակության (հաշվառման) վայրի կեսաթոշակ նշանակող մարմին: Տարիքային կենսաթոշակ նշանակելու համար նա պետք է ներկայացնի՝

1) դիմում,
2) անձը հաստատող փաստաթուղթ,
3) հանրային ծառայությունների համարանիշ,
4) աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթը (աշխատանքային գրքույկը, անհրաժեշտության դեպքում՝ ստաժը հաստատող այլ փաստաթղթեր կամ արխիվային տեղեկանքներ),
5) սոցիալական վճար կատարած լինելու մասին ծառայության տված տեղեկանք (կամ այդ փաստը հավաստող վճարման հանձնարարագրեր, անդորագրեր) կամ գործատուի տված տեղեկանքն աշխատավարձի չափի մասին՝ ըստ տարիների եւ ամիսների,
6) լուսանկար (4 x 6 սմ չափի):

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում քաղաքացին լրացնում է աշխատակցի տրամադրած դիմումի ձեւը, որից հետո նրան է վերադարձվում դիմումի ծանուցումը, որտեղ նշվում է դիմումի գրանցման համարը, ընդունման ամսաթիվը, ընդունող աշխատակցի ազգանունը, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու ժամկետը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ո՞վ է հաշվարկում գնաճի ցուցանիշը եւ ինչ կարգով է հաշվարկվում այն:

Մխիթար Սարգսյան (43 տարեկան, տնտեսագետ)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ գնաճը սպառողական գների ինդեքսի հավելաճի տեմպն է: Սպառողական գների ինդեքսը ներկայացնում է սպառողական շուկայում գների շարժը: Սպառողական շուկայի համար գների ինդեքս (ՍԳԻ) ԱՎԾ-ն հաշվարկում է ամսական պարբերականությամբ, դիտարկելով 470 ապրանքների եւ ծառայությունների գները ՀՀ 10 մարզերում եւ Երեւանում: 470 ապրանքների եւ ծառայությունների ցանկն ընտրվել է հասարակության շրջանում սպառողական ծախսերի վերաբերյալ հարցումների իրականացման արդյունքում:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ինչպես աշխարհի բոլոր երկրներում, այնպես էլ ՀՀ-ում գնաճ տերմինը հիմնականում կիրառվում է, երբ խոսքը գնում է սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) հավելաճի տեմպի մասին: Այն թեեւ ամբողջովին չի արտացոլում տնտեսությունը, սակայն, առավել ընկալելի է հասարակության համար:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Կենտրոն վարչական շրջանում

Մի բուռ բարություն... Անցորդներից մեկը հովանոց է թողել անպաշտպան շան համար, որպեսզի նա ձյան սառը փաթիլներից գոնե պաշտպանված լինի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-4 -11 -3 +2
Կոտայքի լեռներ	-6 -10 -2 +2
Կոտայքի նախալեռներ	-4 -9 0 +3
Գեղարքունիք	-6 -11 -3 +1
Լոռի	-7 -10 -1 +4
Տավուշ	-3 -6 0 +2
Արագածոտնի լեռներ	-9 -14 -2 +4
Արագածոտնի նախալեռներ	-1 -3 -1 +5

Արարատ	0 -5 +1 +4
Արմավիր	-3 +1 +4 +6
Վայոց ձորի լեռներ	-4 -7 +2 +4
Վայոց ձորի նախալեռներ	-2 +2 +4 +6
Սյունիքի հովիտներ	-6 -9 0 -4
Սյունիքի նախալեռներ	0 +3 +7 +10
ԼՂՀ	0 +2 +6 +8
Երեւան	-1 -3 +7 +9

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.2.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*